ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

ԵՄ-Ն Ի ՆՊԱՍՏ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ. Բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական առարկաների և մաթեմատիկայի կրթության փորձնական ծրագիր

Իրականացման ժամանակահատված: 23.12.2018 - 22.12.2022

ԱԼԳ երկրներ:

Armenia

Ընդհանուր բյուջե: € 10 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

The World Bank

Նախագծի նկարագրություն:

Ծրագիրը նախատեսված է բարելավելու բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական առարկաների և մաթեմատիկայի (անգլ. միասին՝ STEM) դասավանդումը Հայաստանի ընտրված մարզ(եր)ի դպրոցներում: Հետագայում, ձեռք բերված փորձի հիման վրա, ՀՀ ԿԳՄՍ նախարարության վերահսկողությամբ՝ ծրագիրը կտարածվի հանրապետության բոլոր դպրոցներում՝ բարելավելու Հայաստանի միջնակարգ կրթության որակը: Ծրագրի նպատակն է աջակցել ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը վերամշակելու 5-12-րդ դասարաններում նշված առարկաների ուսումնական ծրագրերը, դրանց առնչվող մանկավարժական նյութերը՝ դասագրքերը, ուսուցչի ուղեցույցները, նաև քննությունները կամ քննական ցուցումները՝ օգտագործելով արդիական մեթոդներ և տեխնոլոգիաներ, ինչպես նաև զարգացնելով Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոնի (ԿԶՆԱԿ) կարողությունները:

Ակնկալվող արդյունքներ:

Ծրագիրն ունի երկու բաղադրիչ: Առաջինն ուղղված է աջակցելու ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը.

• լրամշակելու և վերամշակելու 5-12-րդ դասարանների բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական առարկաների և մաթեմատիկայի (STEM) առնչվող նյութերը՝

  տվյալ առարկաների գծով ՀՀ հանրակրթության ուսումնական ծրագրերը,

  դրանց առնչվող մանկավարժական նյութերը՝ դասագրքերը, ուսուցչի ուղեցույցները, նաև քննությունները կամ քննական ցուցումները,

• Հայաստանի ընտրված մարզ(եր)ում վերապատրաստելու ուսուցիչներին՝ լրամշակված և վերամշակված նյութերի ու դրանցով աշխատելու առաձնահատկությունների շուրջ,

• գործարկելու այդ ուսումնական ծրագրերն ու դրանց առնչվող մանկավարժական նյութերը՝ դասագրքերը, ուղեցույցները Տավուշի մարզում (հնարավոր է նաև Շիրակի մարզում՝ ֆինանսական միջոցների առկայության դեպքում),

• գնահատելու դրանց կիրառման փորձը և տալու դրանց համատարած կիրառման առաջարկներ:

Ծրագրի երկրորդ բաղադրիչն ուղղված է զարգացնելու կրթության որակի վրա ազդող առանցքային քաղաքականությունը ձևակերպելու և կառավարելու ԿԶՆԱԿ-ի կարողությունները դասընթացներով և նման այլ միջամտություններով: